

## ԱՍԴԻԿ ԱՍՏՎԱԾՈՒՅՈՒ ՏԵՂՄ ԵՎ ԴԵՐԸ ՀԱՅՈՑ ՌԻՑԱՐԱՆՈՒՄ

### ՎԻԿՏՈՐՅԱ ՎԱՍԻԼՅԱՆ

Յայոց դիցարանում ջրի, սիրո, գեղեցկության, խոնավության և հեշտասիրության աստվածութիւն է Աստղիկը՝ Վահագնի<sup>1</sup> սիրեցյալը: «Աստղիկ» անունը համադրվում է Վեներա<sup>2</sup> նոլորակին (Արուսյակին, հմնտ.՝ հռոմեական «Վենուս» - «Լուսաստղ»): Նրա գլխավոր մեհյանը գտնվում էր Աշտիշատում<sup>3</sup> (ժամանակակից Մուշ քաղաքից դեպի հյուսիս՝ ներկայիս Թուրքիայում)՝ Վահագնի մեհյանի կողքին, և կրում էր «Վահագնի սենեակ»<sup>4</sup> անվանումը:

Յնարավոր է, որ սկզբնապես Անահիտը<sup>5</sup> և Աստղիկը եղել են նույն աստվածության տարբեր անվանումները, սակայն հետագայում երկճյուղվել են, և Աստղիկը համարվել է ջրի ու սիրո աստվածություն: Յելլենիզմի դարաշրջանում Յայաստանում նրան նույնացրել են հունական Աֆրոդիտեին, որի քանդակներն ել համարել են Աստղիկի պատկերներ: Նրա հայկական «աստղ» (Haster-)<sup>6</sup> անունը իր սենական զուգահեռներն ունի աքքադական Իշտար, Փյունիկյան Աստարտա, ասորական Դերկետո-Ատարգատիս սիրո, պտղաբերության դիցուիների հետ: Յ. Աճառյանը Աստղիկ անունը քարգմանություն է համարում ասորերեն «Կառուկաբտա» բառից, որը նշանակում է «Աստղիկ», Արուսյալ՝<sup>7</sup>:

Աստղիկին նվիրված հաջորդ պաշտամունքային վայրը գտնվում էր

<sup>1</sup> Վահագնը հայոց դիցարանում ռազմի, ամպրոպի, կայծակի և հաղթանակի աստվածությունն ու Աստղիկ դիցուիու սիրեցյալն է:

<sup>2</sup> Տե՛ս «Միֆի հարօն միքա», Տ. 1, Մ., 1987, էջ 118: Յռոմեական դիցարանության մեջ սիրո, գեղեցկության, պտղաբերության, այգիների դիցուիներն, Յովիսների սերնոյի նախանային էր համարվում (հմնտ.՝ հունական Աֆրոդիտեն):

<sup>3</sup> Այստեղ էին գտնվում նաև «Ոսկեծին» Անահիտի և «Վիշապաքաղ» Վահագնի մեհյանները, որը նույնապես հավանաբար խորհրդանշում էր երկու դիցուիների երբեմնի նույնացումը և համանման գործառույթները: Աշտիշատը տեղադրված էր Քարքելեռան մերձակայքում, ընկած էր Եփրատի գետեզերքին (տե՛ս Ազարանգեղոս, Յայոց Պատմություն, քարզ. Ա. Տեր-Ղևոնյանի, Եր., 1983, էջ 602-603):

<sup>4</sup> «Աեմեակ Վահագնի» իին հայերենում նշանակել է հան «հարս» կամ «հարճ» Վահագնի: Եվ կարելի է նաև Վահագնի հարս, սիրուի իմաստով հասկանալ (տե՛ս Ս. Յարությունյան, Յայ առասպելաբանություն, Բեյրութ, 2000, էջ 165):

<sup>5</sup> Տե՛ս Կ. Վ. Սելիբ-Փաշայան, Անահիտ դիցուիու պաշտամունքը, Եր., 1963, էջ 33, Ա. Առաքելյան, Յայ ժողովրդի մտավոր նշակույթի զարգացման պատմություն, հ. I, Եր., 1959, էջ 58:

<sup>6</sup> Տե՛ս Ս. Յարությունյան, Յին հայոց հավատալիքները, կրոնը, պաշտամունքն ու դիցարանը, Եր., 2001, էջ 41, Սկրտիչ Էմին, Յնասիրութիւն ի վերայ հայկական հեթանոսութեանց, Յարմաշ, 1875, էջ 19: Այստեղ Սկրտիչ Էմինը նրա անունը բխեցնում է բուն հայկական «աստղ» բառից՝ «իկ» մասնիկով, որը բառի փոքրացուցիչ տարբերակն է: Սանսկրիտերեն «տարա» և գենդերեն «աստղ», «ստար» բառերին նույն է, ինչպես նաև՝ պարսկական «դաշտեր» և աքքադական «իշտար» անվանումներին, և մեկնարանվում է որպես ամենամարուր կրակի աղբյուր (հմնտ.՝ հռոմեական Վեներան):

<sup>7</sup> Տե՛ս Յ. Աճառյան, Յայոց անձնանունների բառարան, հ. Ա., Եր., 1942, էջ 232:

Անձնացյաց գավառում՝ Պաղատ<sup>8</sup> լեռան վրա և կոչվում էր «Տուն Արամազդայի<sup>9</sup> և Աստղկան», ուր կատարում էին նրան նվիրված տոնախմբությունները: Նրա մյուս մեհյանը Վանից հարավ էր՝ Արտամետում: Թովմա Արձրունիմ<sup>10</sup> պատմում է, որ Արտաշեսը Արտաշատում կառուցում է Աստղիկին նվիրված տաճար՝ այգիներով և գանձատնով, իսկ տաճարի մեջ դնում է Աստղիկի արձանը:

Վերջինիս պաշտամունքը լայն տարածված էր Տարոնում, այդ իսկ պատճառով, ինչպես հաղորդում է Գարեգին Սրվանձտյանցը, Տարոնում բլուր կամ բարձր սար չկար, որ Աստղիկին նվիրված չիներ: Նրա անունով են կոչվել Տարոնում և Կասպուրականում մի շարք տեղանուններ՝ բլուրներ, սարեր, գյուղեր, ամրոցներ (Մշո Սուլր Յովիաննես վանքին մերձակա Տորոս գյուղի մոտակայքի բարձունքը, Վարագա սարի մի մասը, Աստղնաբերդը՝ Մուշից արևմուտք, նաև Յաշտյանք գավառի մոտ՝ Աստղաբերդը): Գարեգին Սրվանձտյանցը իր «Թորոս Աղբար»-ում հիշում է, որ Սեբաստիայի լեռներից մեկը կոչվում էր Աստղիկ, նույն շրջանում կար գետ, որը նույնպես կոչվում էր Աստղիկ, իսկ Աստղաբլուր կա նաև Արցախում<sup>11</sup>:

Աստղիկին նվիրված պաշտամունքային վայրերի այս բազմաքանակությունը, անշուշտ, խոսում է նրա պաշտամունքի լայն տարածվածության մասին<sup>12</sup>: Աստվածուհու խորհրդանիշն էր վարդը, որից և ծագում է դիցուհու «Վարդամատն» մակղիրը, իսկ թռչուններից՝ աղավնին, որը երևում է նրան նվիրված Վարդավարի<sup>13</sup> տոնին աղավնիներ թռցնելու սովորույթից: Ըստ գրավոր ավանդության՝ Աստղիկի համաժողովրդական տոնը Վարդավարն էր, եթե դիցուհուն վարդեր են մատուցել: Նրա պաշտամունքը կապվում էր ջրի հետ, որը դարձյալ երևում է Վարդավարին միմյանց վրա ջուր ցողելու սովորությունից, ջրով լոգանք ընդունելու և մաքրագործվելու ավանդություններից: Աստղիկի ջրային պաշտամունքի վկայությունները պահպանվել են նաև նրա մասին առասպեկտներում: Դրանցից մեկի համաձայն՝ Աստղիկը ներկայացվում է նոյի դուստր՝ ծնված ջրհեղեղից հետո՝ դարձյալ կապված ջրհեղեղի և ավետաբեր աղավնու գաղափարների հետ<sup>14</sup>:

Հին Արտաշատից և Սատաղից (Արևանտյան Յայաստան, Երզնկա)

<sup>8</sup> Տես Ա. Տաղավարյան, Յայոց հին կրօնները, Կ. Պոլիս, 1909, էջ 76-77 («Երկրորդ մեհեանն էր Վասպուրականի Անձնացեաց Պաղատոյ լեռան վրայ Արամազդայ կից, որոյ հետ կը տօնուեր Նաւասարդն: Երրորդն Արտաշես Բ-ն կանգնեցրեց Արտամետի քով»): Նա նաև նշում է, որ ամսվա 7-րդ օրը Աստղիկ, իսկ 3-րդը՝ «Գիշերավառ էին կոչվում»:

<sup>9</sup> Տես Ղ. Ակիշան, Յին հավատը կամ հեթանոսական կրօնը հայոց, Վենետիկ, 1895, էջ 280, ինչպես նաև՝ Ն. Դոլենս և Ա. Խաչ, Պատմութիւն հին հայերի, թարգմ.: Ռ. Քաջբերումի, Թիֆլիս, 1909, էջ 219:

<sup>10</sup> «Իսկ երեք մասի ճյուղավիրված, փոքր ու գոգածն հովտում, որ սկսվում է երեք բլուրներից, փոքրածքի միջոցով կառուցեց բարձրաբերձ աշտարակ և նրա վրա կանգնեցրեց Աստղիկի պատկերը, իսկ մոտակայքում՝ գանձատուն, կուռքերին հովանավորելու համար: Նույն տեղում հիմնեց ամեն տեսակ բարձրներով լեցուն ու հարմարավետ վաճառափողներ...» (Թովմա Արծրունի, Պատմութիւն Արձրունեաց տան, Եր., 1985, էջ 74):

<sup>11</sup> Տես Յ. Եփրիկեան, Պատկերազարդ բնաշխարհիկ բառարան, Յ. Ի. Գիրք Ա, Վենետիկ, 1903, էջ 249:

<sup>12</sup> Տես Կ. Վ. Եթիք-Փաշայան, նշվ. աշխ., էջ 35, նաև՝ Ս. Յարությունյան, Յին հայոց հավատալիքները..., էջ 42:

<sup>13</sup> Տես Կ. Վ. Եթիք-Փաշայան, նշվ. աշխ., էջ 128-133:

<sup>14</sup> Տես Վիկտորյա Վասիլյան, Աստղիկ դիցուհու պաշտամունքը և Վարդավարի տոնը, «Պատմություն և մշակույթ», Յայագիտական հանդես, Գ, Եր., 2012, էջ 277-284:

հայտնաբերված պաշտամունքային արձանիկները դիցուհուն ներկայացնում են մերկ, լոգանքի պահին: Զրի հետ ունեցած այս կապի պատճառով էլ նա դարձել է ամպրոպային աստծո՝ Վիշապաքաղ Վահագնի սիրեցյալը. խորհրդանշել է ամպրոպային վիշապից հափշտակված, «կապված երկնային ջրերը»: Վիշապին սպանելուց և երկնային ջրերը (Աստղիկին) ազատելուց հետո հավանաբար կատարվել է Վահագնի և Աստղիկի ամուսնությունը՝ սուրբ հարսանիքը<sup>15</sup>: Այդ է վկայում Նոր տարվա՝ Նավասարդի օրերին կատարվող Վարդավառի տոնախմբությունները Աստղիկին ձոնված լինելու իրողությունը: Այս տոնը համարվում էր վիշապամարտի<sup>16</sup>, արգելափակված ջրերի ազատման, աստվածային սուրբ ամուսնության, նոր տարվա, նոր աշխարհի սկզբնավորման և արգասավորման ծիսական հին խորհուրդը: Յարկ է հիշատակել, որ Պաղատ (Պաշատ) լեռան վրա կանգնեցված Աստղիկի կուռքը գտնվում էր Արանազդի<sup>17</sup> պատկերի կողքին, որի հետ և կատարվում էր նրա տոնախմբությունը Նավասարդին՝ Ամանորին: Վերջինս հավելյալ տոների շարքում էր:

Ղևոնդ Ալիշանի վկայությամբ, Աստղիկը թերևս ամենասիրելին ու ամենից ազգայինն էր, որին ոմանք, Անահիտի հետ շփոթելով, նույնպես համարել են Արանազդի դուստրը: Ազգային ավանդության համաձայն՝ Աստղիկին<sup>18</sup> սեփական հայկական անվանք են կոչում, որը նման չէ օտարներին, համարում են Նոյի դուստրը՝ ծնված ջրեղեղեղից հետո, ինչպես իր եղբայրը՝ Մանիստոնը: Թե վերջիններիս հայրը ինչ անունով է հանդես գալիս հայոց առասպելներում, հայտնի չէ, և Ղևոնդ Ալիշանի կարծիքով՝ Աստղիկը Նոյի դուստրը լինել չէր կարող, հավանաբար եղել է նույն հին նահապետի դուստրը՝ իրական անձ և ոչ թե մտացածին մեկը:

Բերոսոսյան Սիրիլլան<sup>19</sup> Աստղիկին համարում է Քսիսութրոսի (Խորենացին վերջինիս համարում է Նոյ) դուստր և նկարագրում է, որ հաշտա-

<sup>15</sup> Տե՛ս Ս. Ջարությունյան, Յայ առասպելաբանություն, էջ 164:

<sup>16</sup> Տե՛ս նոյն տեղը, էջ 164-167:

<sup>17</sup> Տե՛ս Դ. Ալիշան, Յայոց հին հավատքը կամ հեթանոսական կրոնը, Եր., 2002, էջ 144:

<sup>18</sup> Յ. Սատիկյանը նշում է, որ մեր նախմները –իկ նվազական մասնիկը օգտագործում էին տվյալ աստծո սիրելի կամ բարի նկարագիրը շեշտելու համար, ինչպիսի գնահատանքի և մեծարանքի են արժանացել նրա կրոնից հիշատակվող Յայկը (=Յայ+իկ), Աստղ+իկ և Կրուս+յակ անվանումները և այլն: Իսկ Վրմին Արթուրը «Յնազույն հեթանոսական աստվածաշխունց՝ «Սասնա Ծուեր» եպոսը» գրքում (Լոս Անջելես, 2007, հ. I, էջ 219) այդ վերջածանցին մեծացնելու կամ տեղանվան իմաստ է ավելացնում. այսպես այն հասկացվել է հնում: Օրինակ՝ Աստղիկ (Աստղ+իկ=մեծ աստղ՝ Վեներա), Յայկ (Յայ+իկ=Յայկ, մեծ հայ, նախահայր), Գագ+իկ (Կապիհայր իմաստով) և այլն: Իսկ հետագայում այս մասնիկը փաղաքական կամ փոքրացուցիչ իմաստ է ստացել:

Աստղիկ անունը Յ. Գելցերը համարում է հունարեն *Asteria* կամ *Afrodite* անուններից թարգմանություն: Սակայն Աստղիկի պաշտամունքը անբաժան է աքքադական Իշտարից՝ Վեներա մոլորակի հովանավորյալ աստվածություց և նրա սեմիթական համարժեք Աստարտե, Դերկետո-Աքարգատիսից: Կա կարծիք, որ Իսթարը փոխառվել է հայկական Աստղիկի հնդեվորապական նախատիպից, ինչպես Վերը նշվեց՝ *Astlik* (\*Haster - «աստղ»), որն էլ հավանաբար ծագում է \*Has(\*հեթ\*.-s-) «այրվել, վառվել», \*Has-ter- «առկայօնդ ածխակտոր» կամ «աստղ» -\*ter- վերջածանցով:

<sup>19</sup> Տե՛ս Մովսես Խորենացի, Պատմություն հայոց, թարգմ. Ստ. Մալխասանցի, Եր., 1968, Ա. Զ, էջ 79-81: «Սիրիլլական պատգամք» գրքում ներկայացվում է Տիտանների կովի շարժառիթը, որին մի քանի դիցուհիններից բացի, Ավրորիտեն է միջամտում՝ հաշտության համար: Իսկ Մովսես Խորենացու մոտ Աստղիկին է միայն հաշտարարի դեր տրվում՝ որպես Տիտանների քույր: Այստեղ արդեն նկատելի են հունական առասպելների «հայկականացումը» և երկու դիցուհինների «նոյնացումը»:

րար էր իր եղբայրներ Տիտանի<sup>20</sup> և Յարեթի՝ Զրվանի դեմ ունեցած կռվի ժամանակ: Վերջինիս զավակներից մի քանիսին փրկելով՝ տարավ, ձգեց Օլիմպոս լեռան վրա, ինչի համար էլ այդ տեղը կոչվեց Դիցընկեց: Բայց հայերը ավելի համերաշխ են ցույց տալիս եղբայրներին ու քրոջը, որը նրանց հավասար ժառանգում է նույն երկրի հարավային կողմը՝ ըստ ոմանց՝ Երջանիկ Արարիան: Սակայն եղբայրները իրենց քրոջը չեն թողնում իեռու գնալ, այլ պահում են Տարոնի կողմերում, որտեղ նախկինում բնակվում էին իրենք: Այստեղ է հենց գտնվում վերը հիշատակված Աստղնաբերդը կամ Աստղիկի բերդը՝ համառոտ Ասղնբերդ կոչվածը, որը, համաձայն ավանդության, կառուցել է նոյն ինքը՝ Աստղիկը, իր Զրվան եղբոր ապահովության համար: Այն հետագայում վերանվանվում է Մոկաց բերդ: Անահիտի նման Աստղիկն էլ լեռների վրա ունեցել է այլնայլ մեհյաններ և «աբոռներ»: Արտաշես Մեծ արքան Կանի կողմերում իր և տիկնոց համար գրոսատեղիներ կառուցելուց բացի, Արտամետի մոտերքում կառուցում է Աստղիկի տաճարը, որի պաշտամունքը ընդունվում էր իր և Սարենիկի<sup>21</sup> կողմից: Իսկ Սարենիկ տիկնոց մասին ասվում էր, որ նոյնիսկ իր ազգակիցների քրիստոնեական քարոզը լսելուց հետո չկարողացավ բաժանվել Աստղիկի պաշտամունքից:

Ինչպես վերը նշվեց, Աստղիկի գլխավոր մեհյանը գտնվում էր Աշտիշատում: Այն մեկն էր այն երեքից, որոնք մեկ անունով կոչվում էին «Վահեվահյան», և որոնցից մեկն էլ «Ուսկեծի», «Ուսկեմայր» Անահիտի մեհյանն էր: Աստղիկինը առանձին կոչվում էր «Սենեակ Վահագնի». Վերջինիս էլ նվիրված էր երրորդը: Յայկական հերանոսական դիցարանում, հատկապես Տարոնում, առանձնացվում է այս եռաստվածությունը՝ Վահագն-Անահիտ-Աստղիկ, որի առավել նոր տարբերակն էլ առկա է Տրդատի հրովարտակում՝ հոչակված գլխավոր եռաստվածությունը՝ Արամազդ-Անահիտ-Վահագն<sup>22</sup>:

Աստղիկի և Վահագնի պատկերները, Յունաստանից բերվելով որպես Աֆրոդիտե ու Յերակլես, հուշարձաններ կանգնեցվեցին: Սրանք՝ իբրև իր սիրելիներ, Տիգրանը կանգնեցնել տվեց կողք կողքի (**Խորենացի**, Բ. ԺԴ): Այնուհետև, այս երկու դիցուիդների գաղափարները հելլենիստական դարաշրջանում միացան, ապա Աստղիկը համարվեց ցանկասիրության

<sup>20</sup> Տես **Աւենդ Ալիշան**, Յայաստան առաջ քան զինելն Յայաստան, Վենետիկ, 1904, էջ 63-64. **Ա. Տարությունյան**, Յայ իին վիպաշխարհ, Եր., 1987, էջ 39-40:

<sup>21</sup> Ալանաց չքնաղագեղ օրիորդ Սարենիկը, որին տեսնելով Արտաշեսը սիրահարվում և փախցնում է: Մեզ է հասել այս գեղեցիկ առասպելը, որի առթիվ Կ. Կոստանյանցը հետաքրքիր համեմատական է տամում Արտաշեսի կողմից Սարենիկին փախցնելու և վահագնի կողմից Աստղիկին ազատելու ու հոր տանից առևանգելու միջև: Եղիշե Դուրյանը Սարենիկի մասին այսպես է խոսում. «Մեր վիպասաններում երգը, Սարենիկի տենչանքներու մասին, իր դիւրին բացահայտութիւն գտած կ'երեւի, մանաւանդ մեր եկեղեցական մատենագիրներուն մօտ, Աստղկան տոփանքի մը անառակ ցանկութիւնք վերագրուելով թագուիդին» (**Եղիշե Դուրյան**, Յայոց իին կրօնը կամ հայկական դիցարանությունը, Երևան, 1933, էջ 49):

<sup>22</sup> Ակնհայտորեն համընկնում է իրանական Ակուրամազդա-Անահիտ-Միթրա, ապա և տարածաշրջանի իին լուսիսկան, խուսիսկան և թերևս հայասական աստվածների առաջին խնրին՝ մեծ աստված, նորա կինը և որդին, իսկ Վահագն-Աստղիկ-Անահիտ դիցարանական եռյակի պաշտամունքը կենտրոնացված էր Տարոնում, որտեղ այս երեքի մեհյանները կողք կողքի էին տեղադրված, Անահիտի ու Աստղիկի գործառությունները աղերսվում էին իրար՝ «առարինության» և «գեղեցկության» անձնավորումների վրա պահապան էր կարգված «քաջության ոգին» (տես **Կ. Կոստանյանց**, Յայոց հերանոսական կրօնը, Վաղարշապատ, 1879, էջ 23-24):

«գարշելի» աստվածուի, որի կուռքերը մյուս հեթանոս աստվածների հետ մեկտեղ ավերեց և անհետացրեց ս. Գրիգոր Լուսավորիչը ու դրանց տեղում կառուցեց Աշխարհամատրան տաճարը: Հեթանոսների պաշտամունքն ու հանդեսները մոռացության տալու վերաբերյալ Վարդան վարդապետը ներքողում այսպես է նկարագրում. «Աստղիկ՝ զբողութիւնն առեալ փախչէր առ ննամիս իւր»: իսկ Լամբրոնացին իր 67-ոդ սաղմոսի մեկնության մեջ գրում է. «Զի թէ ոչ էր պակասեալ, զբազում ամաց մեհեանն շինեալ Վահեւանեան Դիցն, և դիւօքն ի մարդկային հնարից պարսպեալ, Ս. Գրիգոր՝ որպէ՞ս մի տեառնագրելով՝ կործանեալ անհետ արար»<sup>23</sup>:

### **Աստղիկի մասին պահպանված առասպելները**

Ըստ իին ավ անդությունների՝ Յայաստանում առաջին բժիշկը<sup>24</sup>, որը նաև ստեղծեց բժշկության արվեստն ու տարածեց, Աստղիկ անունով դիցարանական կերպարն էր, որը հեթանոսական ժամանակաշրջանում Յայաստանում համարվում էր բնության մայր պահպան, պտղաբերության և բժշկության աստվածուի՝ համանան եգիպտական Իզիդային, աքքաղական Իշտարին, սիրիական Դերկետոյին կամ հունական Ասկլեպիոսին կամ Եսկուլապին: Սակայն այս դիցուիին Յայաստանում առավել հայտնի էր որպես սիրո և գեղեցկության, կույսերի և հիլ կանանց հովանավոր աստվածուիի:

Ազարանգեղոս պատմիչը Կստղիկին կոչում է Աֆրոդիտե, որով և որոշում է նրա տեղը հայոց պանթեոնում: Աստղիկը մեկն էր հեթանոս հայերի կողմից սիրված և պաշտված աստվածուիիներից: Քրիստոնեությունը այս առասպելական կերպարի ծագման մասին մի շարք աստվածաշնչան պատմություններ է հյուսել, որոնք կներկայացնենք ստորև:

Աստղիկը քիրստոնեության ընդունումից հետո սկսեց համարվել Նոյի դուստր, որը Յայաստան էր եկել իր Զրիեղեղից հետո, երբ տապանը կանգ էր առել այս երկրի սարերի վրա<sup>25</sup>.

Օժտված լինելով մեծ հետաքրքրասիրությամբ՝ Աստղիկը սկսում է ծանրանալ Յայաստանում աճող բուժիչ բույսերին և հարուստ բնաշխարհին: Դրա շնորհիվ բնակիչները շատ տեղեկություններ ստացան բույսերի բուժիչ հատկությունների մասին: Յետո նա ուղևորվում է Եգիպտոս<sup>26</sup>, որտեղ իր որդի Ապոլլոնի<sup>27</sup> հետ միասին շարունակում է բժշկություն ուսուցանել: Վերջինս իբրև թե հենց այն նշանավոր հույն աստվածն էր, որին հույները սկսեցին համարել տարբեր գիտությունների և արվեստների աստված, այդ թվում նաև՝ բժշկության: Դին ժամանակներում Յայաստանում բժշկության

<sup>23</sup> Ուսոնդ Ալիշան, Յայաստան առաջ քան զլինելն Յայաստան, էջ 145:

<sup>24</sup> Տե՛ս Օգանեսյան լ. լ. Իстория медицины в Армении с древнейших времен до наших дней. Часть 1. Ер., 1946, էջ 47-51:

<sup>25</sup> Տե՛ս Ուսոնդ Ալիշան, Յայաստան առաջ քան զլինելն Յայաստան, էջ 265-266:

<sup>26</sup> Ուսոնդ Ալիշանի վկայությամբ, որը իիմնվում է Վարդան պատմիչի գրածի վրա, Նոյի դուստր Աստղիկը ուղևորվում է «Երջանիկ Արարիա», որտեղ թագավորում էին կանայք, և Սողոմոնի մոտ եկած Սարա թագուհին իբրև նրա ժառանգ է ներկայացվում:

<sup>27</sup> «Պատմիչ Թռվնա Արծրունին գրում է. «Արտաշեսը (Արտամետում) կառուցեց շենքեր, ամրոցի շուրջը կար ծառաշատ, բազմապիսի ծաղիկների անուշ բույրով լցված ծաղկավետ բուրաստան, որը ոչ միայն ախորժելի էր աչքին և հաճելի հոտոստելիքին, այլև դեղեր ստեղծելու համար՝ համաձայն Եսկուլապի (առասպելական բժիշկ՝ Ապոլլոնի որդին) բժշկական հնարանտության»: Նոյմ պատմիչի վկայության համաձայն՝ այդ չքնաղ բուրաստանը՝ բուժիչ ծաղիկներով և բույսերով, Աստղիկի արձանի մոտակայքում էր գտնվում (տե՛ս Թովմա Արծրունի, նշվ. աշխ., էջ 74):

արվեստի եգիպտական ծագումը բացառվում էր, ինչն էլ վկայում է, որ այս լեզենդը քրիստոնեական ուշ ժամանակների հորինված պատմություն է:

Այս առասպելից մենք կարող ենք միայն մի հավաստի ենթադրություն կատարել, որ դեռ մինչև քրիստոնեության ընդունումը Աստղիկը համարվում էր բժշկության և հոյի կանանց հովանավոր աստվածուհի, ուստի նրա պատվին կառուցվում էին մեհյաններ, որտեղ բժշկվելու էին շտապում հիվանդները, ինչպես Ապոլլոնի և Եսկոլապի տաճարի քրմերի մոտ՝ հույները: Ամենահետաքրքիրն այն է, որ Աստղիկ աստվածուհին շարունակում էր մեծ սեր ու հարգանք վայելել հայերի մեջ նույնիսկ քրիստոնեական ժամանակաշրջանում: Նրա պաշտամունքը Հայաստանում կապվում էր նաև Հայաստանի բնակելի տաճարներում ջրի ոռոգման և մատակարարման խնդրի հետ: Մարի և Սմիռնովի կողմից Հայաստանում գտնված ձկնակերպ վիշապները սկսեցին վերագրվել Աստղիկին և հանդես էին գալիս որպես ջրի աստվածուհու խորհրդանշներ: Սիրիայում և Փյունիկիայում այս աստվածուհու պաշտամունքում նրա խորհրդանշը և ուղեկիցներ էին համարվում աղավնին և ձուկը<sup>28</sup>: Սիրիայում նույնպես Դերկետու<sup>29</sup> աստվածուհու արձանը ձկնակերպ էր, Չամիրամին էին ձոնվում Ասորեստանում աղավնին ու ձկները: Հոռոմում և Հունաստանում Աֆրոդիտե-Վեներային էին խորհրդանշում դելֆինները: Պոմպեյի որմնանկարչության մեջ դելֆինները Վեներայի հետ էին պատկերվում և որպես ջրային կենդանիներ՝ համարվում էին նրա ուղեկիցները: Ասկալոնում<sup>30</sup> (Դամասկոս) Դերկետու աստվածուհու արձանը ձկնակերպ էր, և նրա տաճարի շուրջը ձկնառատ լիճ էր գտնվում: Ստորև կներկայացնենք նաև նրա հետ սերտորեն առընչվող Աստղիկի՝ ձուկ դառնալու մասին առասպելը:

Հայաստանում ձկնակերպ այդ վիշապների արձանները գտնվում էին ծովերի, արհեստական ջրանցքների և ջրամբարների մոտ, ինչպես նաև կանգնեցվում էին հատուկ առիթներով, և նրանց շուրջ զոհաբերություններ էին կատարվում: Վահագնը, տեսնելով Աստղիկի պատկերները, այսինքն՝ ձկնակերպ վիշապները, շտապում էր անձրև տեղալ այն վայրերում, որտեղ դրանք կանգնեցված էին<sup>31</sup>:

Հունական աղբյուրներում վկայություններ կան, որ Դեմետրայի պահանջով կուրետներից<sup>32</sup> մեկը դառնում է վիշապ: Ըստ Ենթա Պետրոսյանի՝ Տիրը և Տիրուի Անահիտը և այդ շարքի աստվածային գույգերը, օրինակ՝ «Աստղիկ-Վահագն», ունեցել են մեղվի կամ վիշապի (օձի) կերպարանք ընդունելու հատկություն<sup>33</sup>: Դերկետուի և Չամիրամի պաշտամունքում

<sup>28</sup> Տե՛ս նույն տեղը, էջ 72:

<sup>29</sup> Տե՛ս «Միֆы народов мира». Том 1. М., 1991, էջ 115-116: Դերկետոն հմայում է իր տաճարի քրմերից մեկին և կենակցում, որի հանդեպ Աֆրոդիտեն սեր էր արթնացրել: Սակայն Չամիրամ դատեր ծնվելուց հետո Դերկետոն սպանում է իր սիրեցյալին, իսկ ինքը նետվում է ծովը և դառնում ձուկ: Նրա արձանները ձկնակերպ էին:

<sup>30</sup> Տե՛ս Մանուկ Աբեղյան, Երկեր, հ. Է, Եր., 1975, էջ 154:

<sup>31</sup> Տե՛ս Մանուկ Աբեղյան, «Վիշապներ» կոչված կոթողներն իբրև Աստղիկ-Դերկետու դիցուհու արձաններ, Եր., 1975, էջ 91-93:

<sup>32</sup> Հռեա աստվածուհու քրմերը, բուսական ուժեր, դեմոններ:

<sup>33</sup> Հունական աղբյուրներում վկայություններ կան, որ Դեմետրայի պահանջով կուրետներից մեկը վիշապ է դառնում: Ըստ Ենթա Պետրոսյանի՝ Տիրը և Տիկին, Տիկին-Տիրուի Անահիտը և այդ շարքի աստվածային գույգերը՝ Վահագն-Աստղիկ, Սիրի-Նանե, ունեցել են մեղվի կամ վիշապի՝ օձի կերպարանք ընդունելու հատկություն: Դետևաբար «Ուսկեծին» տիտղոսը կրող մայր աստվածուհիներին նա դիցաբանական

ձկան և աղավնու կերպարանափոխվելու մասին առասպելների օրինակ-ները կբերենք ստորև:

Գարեգին Սրբանձտյանցը բերում է Աստղիկի մասին տարածված առասպելներից հետևյալը. «Եկրատ երը Մշոյ դաշտերը կը մտնէ Կնճան սարերուն մեջ զարնուելով քարերուն մեղ կիրճով մը սեղմուելով գուռգուռ ծայս մը կարծակէ, եւ այդ տեղը Գուռգուռ կը կոչուի, ինձ Աստղիկի լոգարանն է եղեք: Եւ քանզի գիշերները լուացուելու սովորութիւն ուներ Աստղիկ, Դաղօնաց սարին վրայ մեծ կրակ կը վառէին տարփաւոր կտրիճները, եւ այդ լոյսով կը դիտէին Աստղիկի չքնաղ գեղեցկութիւնը. հնարած է Աստղիկ, որ մշուշ պատէ այդ ամբողջ միջավայրը, այսինքն՝ Մշոյ դաշտը ծագած ի ծագս, թէ ամառն եւ թէ ձմեռն մինչ ի ծունկն սարերուն, որով եւ անհնարին կլինի ո՞յ եւ իցէ կողմի լեռներէն տեսնել զինքը»<sup>34</sup>:

Այդ ժամանակվանից այդ տեղանքը սկսեց կոչվել Մշուշ (մառախուռ), իսկ ժամանակի ընթացքուն ծնափոխվեց և կոչվեց Մուշ:

«.....եւ գուցե այս շարունակ և թէ թանձր մշուշն այդ երկիրը կոչւած լինի Մուշ: Արդեն բնակիչք այս երկոտող հանգերգը կերգեն.

Մշու սարերը մուշ է,

Իր հողմ ու ջուրն անույշ է»<sup>35</sup>:

Մյուս տարբերակում՝

«Մշու աշխարհն մշուշ է,

Սարն ու ծորը անույշ է,

Յիւսիս քամին քշէ զիս,

Ուր ծոցին մեջ թաղէ զիս»<sup>36</sup>:

Այսպիսով, տեսնում ենք, որ իին հայերը իրենց հեթանոսական դիցուհուն կապում էին ջրի պաշտամունքի հետ՝ որպես նրա մարմնավորում, որի վերապրուկները հասնում են նաև քրիստոնեական ժամանակները: Չքնաղ դիցուհին, ամեն երեկո լոգանք ընդունելով, հավերժ պահպանում է իր երիտասարդությունը: Այս հատկությամբ նրան կարելի է համեմատել Աֆրոդիտեի՝ ջրից ծնվելու և «անադարտ ծնունդ» և կույս աստվածութի մնալու հետ:

Աստղիկի մասին պահպանված հաջորդ առասպելը հանդիպում ենք Տարոնի մասին պահպանված գրույցներում:

«Տաղօնաց ու Աստղաբերոի սիրահարական վէայ մեջ, ուր Տարօնի դաշտը իրբեւ ծով կը նկարագրուի, սիրուիհն (Աստղիկը) ծրագը թաքցնելով՝ իր Տաղօնցի արքայազուն սիրահարի»<sup>37</sup> ծովուն մեջ խեղդվելուն

հավատալիքներում համարժեք է համարում ուսկեցույն մեղուների: Փոքրասիական առասպելաբանության մեջ «Մեղու» աստվածուիներ Արտեմիսը, Աֆրոդիտեն, Անահիտը կոյսեր իին, չնայած ունեցել են բազմաթիվ սիրային արկածներ: Նրանց կուսությունը մշտապես վերականգնվում էր գետում լողանալուց հետո: Մեղրի համար գործածվում են անարատ, ազնիվ, ազնվազարմ մակրիները, որոնք օգտագործվում են կոյս հարսնացուին, անարատ աղջկան, ինչպես նաև բարձրաստիճան տիկնանց, այդ թվում՝ մայր աստվածուիներին բնորոշելու համար. օր՝ ազնիվ, ազնվազարմ տիկին՝ Անահիտ աստվածուին մակրիներից (տես **Պետրոսյան**, Մեղու-Արդար մեղր-Մայր Աստվածածին, Եր., 2001, էջ 377-382):

<sup>34</sup> Գ. Արվանձտյանց, Գրոց-Բրոց, Կ. Պոլիս, 1874, էջ 97-98:

<sup>35</sup> Ս. Աբեղյան, Երկեր, հ. է, էջ 158:

<sup>36</sup> Յայկ Ածեմեան, Ծաղկաբաղ Վասպուրականի հայ ժողովրդական բանահիւսութեան, առաջին փունջ, Ս. Էջմիածին, 1917, էջ 98:

<sup>37</sup> Աստղիկի սիրեկանը առասպելական, հեթանոսական աստված պետք է լիներ, որի արձանը և տաճարը պետք է գտնվեր Տարոնում՝ հեթանոսական ժամանակաշրջանում,

*պատճառ կըլլայ»<sup>38</sup>:*

Այստեղ տեսնում ենք, որ Աստղիկի առասպելը կրկին կապվում է ջրի հետ: Այս առասպելը անշուշտ ծագում է հեթանոսական ժամանակաշրջանից, քանի որ հանդիպում է նաև հունական դիցաբանության մեջ (օրինակ՝ «Հե'րօ-Լե'անդրէ» առասպելը)<sup>39</sup>: Լեանդրոսը պատահի էր՝ Տրոյական երկրի Արփիոս քաղաքից՝ Յելլեսպոնտոսի ափին: Լեանդրոսը սիրել է Աֆրոդիտեի քրնուիի Յերոյիմ<sup>40</sup> Սեստոսից, որ գտնվում էր նեղուցի հանդիպակաց ափին: Նրա հետ հանդիպելու համար Լեանդրոսն ամեն գիշեր լողալով անցնում էր Յելլեսպոնտոսը: Յերոն, որպեսզի օգնի իր սիրեցյալին, Սեստոսի աշտարակում փարոս էր վառում: Մի անգամ փոթորկի ժամանակ քամին հանգնում է փարոսի կրակը, և Լեանդրոսը խեղդվում է: Առավոտյան ալիքները Լեանդրոսի դիակը դուրս են նետում աշտարակի պատերի տակ: Յերոն, տեսնելով նրան, հուսահատությունից ծովն է նետվում: Այս պատումը, որը երգվել է Օվիդիոսի «Յերոսուիիներ»<sup>41</sup> բանաստեղծության մեջ, բազմիցս պատկերվել է դրամների վրա և հանդիպում է նաև քանդակագործության մեջ:

Դայ գրականության մեջ մենք հանդիպում ենք այս առասպելի մեկ ուրիշ տարբերակի՝ Յովի. Թումանյանի «Ախրամար» պոեմում: Վերջինս Դայաստանում կարող էր տարածվել հելլենիզմի ժամանակաշրջանում՝ Յերոնի և Լեանդրոսի հին հունական վեպի ծագմանը զուգընթաց:

Մեր առասպելում գործողությունների կենտրոն է Վանա ծովը և Աղբամար կղզին, որը նույնանում է Աստղիկ-Շամիրամի պաշտամունքի հետ: Գուրգենը Վանա ծովի առափնյա գյուղից էր: Նա ամեն գիշեր թամարի հետ հանդիպելու համար լողալով կտրում-անցնում էր Վանա ծովը և հասնում Աղբամար կղզի, որը նրա և թամարի հանդիպման վայրն էր: Որպեսզի չմոլորվեր խավարում իր սիրեցյալը, թամարը՝ որպես «կենդանի» փարոս, կրակ էր վառում: Սակայն նրանց երջանկությանը խոչընդոտում են կղզու երիտասարդները, որոնք մի գիշեր հանգնում են թամարի վառած ծրագը: Տղան գիշերով նոլորվում է և խեղդվում, իսկ առավոտյան նրա դիակն ալիքները ափ են հանում: Նա մահանում է թամարի անունը շուրթերին, որի հառաջանքների օրինակով էլ կղզին կոչվում է «Ախրամար»<sup>42</sup>: Սա Աստղիկի հետ կապված առասպելի վերապուկ է, որը հունական դիցաբանության մեջ Աֆրոդիտե աստվածուհու քրնուիու անվան հետ է կապվում: Այստեղ երիտասարդներն են հանգնում կրակը, այնտեղ՝ քամին, սակայն, ըստ էռության, երկու առասպելներն ել բովանդակությանը համանման են: Վանա ծովը և Տարոնի դաշտավայրը Աստղիկի պաշտամունքի կենտրոններ էին: Ըստ ավանդության՝ այստեղ է Շամիրամը նետում իր հոլունքները, որոնք 12 աստղակերպերի և աստղային երկնքի խորհրդանշներն են: Վանի հետ են կապվում նաև քրիստոնեական ժամանակաշրջանում ծագած «Սասնա Ծռեր» էպոսի Աստղիկ-Գագիկ-Խաչապաշտ թագավորը և նրա չքնաղ դուստը Ծովինարը:

իսկ Աստղիկի արձանը Աստղ բերդի մեջ էր, որից և ծագում է այս դիցաբանական վեպը:

<sup>38</sup> «Լումա» թերթ, «Սշո աշխարհ» հոդվածը, 1898, էջ 157:

<sup>39</sup> Տե՛ս Եղիշե Դուրեան, նշան. էջ 49:

<sup>40</sup> Տե՛ս «Միֆы народов мира». Том 1. М., 1991, էջ 294:

<sup>41</sup> «Դիցաբանական բառարան», Երևան, 1985, էջ 109:

<sup>42</sup> Տե՛ս Յովիաննես Թումանյան, Ընտիր Երկեր, էջ 14:

Աստղիկի մասին մեկ այլ առասպել, որ սերտորեն առնչվում է ասորական Դերկետո աստվածուհու հետ, և որը Մանուկ Աբեղյանը համարում է Հայաստանուն Աստղիկ-Դերկետոյի պաշտամունքի վերապրուկ կա Գարեգին Սրվանձտյանցի «Գրոց-Բրոց» գրքում՝ Լեզքի «Սուրբ Թոնրի» նկարագրության մեջ<sup>43</sup>:

«Այս Լեզք գյուղի նոտերը կա մի թոնրի ձևով աղբյուրի փոսակ կամ ջրիոր, որ Սուրբ Թոնրի կը կոչեն, ուր հաճախ զնացողներ կան, շատերուն իբրև ուխտատեղի...»

Մի միայն մեկ ծովակ կ'երևի այդ ջուրին մեջ, և որին որ երևի, ամոր բախտն ու ուխտը կը կատարվի: Դա կմկան կերպարանք ունի եղեր. և արծաթե օղն ալ իր քթին անցուցած՝ կը տեսնվի տակավին: Երեցկին է եղեր դա. կին կարի գեղեցիկ. երբ նստած թոնրի շուրբն հաց կրխե, աղքատ նը կու գա, հաց կ'ուզե, կուտա: Կերակուր կ'ուզե, կուտա, գինի կ'ուզե, կուտա: Թշվառականը կը համարձակի նաև պագ մի ուզել. Երեցկինը կը վարանի, բայց կը մտածե, թե աղքատ թեմարզու է, ի՞նչ կա, մեղք է. գուցե վարձք է. պագն ալ կուտա: Եվ հանկարծ նույն վայրկենին երեցը ներս կմտնե. Երեցկինը ամորեն ու ահեն ինքզինքն կը ձգե թոնրի կրակի մեջ. տերտերն ալ զինքն ի վերն: Բայց տերտերը կը մրրկի. իսկ Երեցկինը կրակն ջուր դառնալով՝ ինքն ալ ծովակ, աստուծոն հրամանքով հավիտենական հիշատակ կը մնա նույն տեղ՝<sup>44</sup>: Այս առասպելի ազգայնացված տարբերակն է. «Կայծակի աստվածը և նրա կինը»<sup>45</sup>: Քահանայի կինը Աստղիկ աստվածուհու առավելուշ ձևափոխված կերպարն է (Մերդագետ գետի աստվածուհին, Վահագնի սիրեցյալը), իսկ նրա արևմտասեմիտական համանունը Դերկետո աստվածուհին է, որի մասին նման առասպելները տարածված են:

Մի գերմանական լեգենդի համաձայն՝ Փրկիչը, անցնելով հացատան կողքով, հաց է խնդրում հացրուխից: Վերջինս հրաժարվում է տալ, սակայն նրա կինը և վեց աղջիկները թաքուն կատարում են Աստծոն խնդրանքը: Որպես վարձք՝ նրանք վերածվում են Պլեատայի<sup>46</sup> աստղերի: Այս առասպելը շատ նման է հայկականին. քահանայի կինը՝ Աստղիկը, նույնաես համեմատվում է հացրուխի և աստղերի հետ: Աստղիկը, ինչպես և այս շրջանի մյուս աստվածները, պետք է համարվեր Վեներա նոլորակի մարմնավորում: Վերջինիս պաշտամունքն անբաժան էր աքքաղական հշտարից՝ Վեներա նոլորակի աստվածուհուց (հայկական Արուսյակ-Լուսնաբագ-Աստղիկ):

Կարծիք կա, որ աքքաղական հշտարը փոխառվել է իր հնդեվորպական նախատիպից՝ հայկական Աստղիկից: Այս կերպ Աստղիկը կարող է համարվել օջախի պահապան աստվածուհի՝ հունական «Աֆրոդիտե-Ուրանիա»<sup>47</sup> երկնային Աֆրոդիտեի համենատ՝ որպես փափկակյաց և օջախի պահապան: Ըստ Ղևոնդ Ալիշանի՝ հելլենիստական ժամանակաշրջանում Աստղիկը ժառանգեց Աֆրոդիտեի հենց այս կերպարը:

Հայտնի է, որ հունական Աֆրոդիտեի նախատիպերից մեկը հշտար աստվածուհին է, որը, անցնելով հունական գեղագիտության բովով, դարձել է գեղեցկության աստվածուհի: Նրա կերպարների մեջ կա մեկը, որը

<sup>43</sup> Գ. Սրվանձտյանց, նշվ. աշխ., էջ 97-98:

<sup>44</sup> Խալաթյանց Գ. Ա. Общий очерк армянских сказок. М., 1885, с. 26.

<sup>45</sup> Արմեն Պետրոսյն. Արմանական էպոս և միֆոլոգիա. Եր., 2000, с. 66-67:

<sup>46</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 66:

<sup>47</sup> Ղևոնդ Ալիշան, Յին հավատք կամ հեթանոսական կրօնք հայոց, էջ 282:

կոչվում է «Անադիոնենե»՝ պարկեշտ և ողջախոհ դիցուիու կուսական նկարագրով: Լողանալիս կամ ջրից ելնելիս նրան տեսնելը համարվում էր բարի նշան, հաջողություն, բախտավորություն<sup>48</sup>: Աֆրոդիտեի այս տիպի պաշտամունքը անցնում է Հայաստան, որի հետքերը մնացել են նրա սրբավայր Տարոնում. լոգանք ընդունելու վերոհիշյալ առասպելը այս ավանդության հետ է կապվում:

Ըստ Ն. Ադոնցի՝ Երիտասարդների կրակ վառելը և Աստղիկի մերկուրյամբ հնայվելը Երջանկության ու բախտի ծարավ էր, որը մերժվում էր քնահաճ Աստղիկի կողմից: Զարմանալի է, որ մեզանում իին անունը մոռացվել է և տեղի է տվել հարևան Երկրներում տիրող անուններին: Հայաստանում Աստղիկը իր հայր Արամազդի և անուսին Վահագնի ուղեկիցն էր և նրանց հետ էր բաժանում իշխանությունը, այնպես որ նրա մյուս, առավել ուշ տարբերակում նա կարող էր վերակազմվել որպես գլխավոր աստծոն կին և Երիտասարդ աստծոն սիրուի (հմտ՝ քահանայի և աղքատի կերպարների հետ: Նաև՝ եթե հաշվի առնենք Վահագնի կողմից վիշապին սպանելու, Երկնային ջրերը ազատելու և դատերը հոր տանից փախցնելու հանգամանքը):

Հայ մատենագրությունից հայտնի է, որ Վահագնը նույնանում է Հերակլեսի<sup>49</sup> կամ Արեսի հետ: Վահագնի վերաբերյալ գուսանական երգը՝ «Երկնէր Երկիր, Երկնէր Երկին», նրան նկարագրում է որպես արևի աստված՝ Վահագն Վերեթրագնա: Վահագնին արևի կերպարում նարմնավորելը բուն հայկական բնույթ ունի: Եվ դա բացատրվում է նրանով, որ Վահագնին է անցել տեղական մի ուրիշ աստծոն ժառանգությունը՝ լծորդված արևին: Այլ կերպ ասած՝ իրանական անվան տակ սքողված է զուտ հայկական աստվածություն, որի հարազատ անունը Եր-Արայի հետ պետք է կապել: Ինչպես որ մակեդոնական Արեսը, որը փոխարինվել է Հերակլեսով, այսպես էլ հայ Եր-Արան դառնում է Վահագն՝ արևեյան Հերակլես:

Աստվածների կերպարանափոխությունը արձագանք է հասարակական կյանքի հիմնական հանգույցների փոփոխման: Բնության աստծու դերը պատերազմի աստծուն անցնելիս նա նաև ժառանգում է առաջինի երեմնի զուգակցի՝ Մայր աստվածուին հետ միությունը: Հետո Աֆրոդիտեի պաշտամունքը Արեսից փոխարինվում է Հերակլեսով, իշտարը ծգոտում է շահել Գիլգամեշի սերը: Նրանց թվին է պատկանում նաև մեր Աստղիկը, որը դառնում է Վահագնի սիրուին: Հրաշագործ ոյուցազնի կերպարով է հայ աղբյուրներում ներկայացվում «Վահագն Տիգրանյանը»<sup>50</sup>, որը, ըստ Կ. Կոստանյանցի, իրական անձ է և ոչ մտացածին, որին իր քաջության համար աստվածացրել են և «վիշապասպանի» տիտղոս տվել. որպես թշնամիներին սպանող և ոչնչացնող՝ նրան էին պաշտում հայ քագավորները: Համեմատական է «Տիգրան և Աժդահակ» առասպելին, որտեղ Տիգրանը սպանում է վիշապազարն Աժդահակին և իր քույր Տիգրանուին ազատում գերությունից:

Վեներա և Մարս մոլորակների աստվածությունները շատ ավանդություններում են հանդես գալիս որպես սիրեկաններ, և հնագույն հայկական դիցարանության մեջ Աստղիկ-Վեներան հավանաբար Հայկ-Մարսի կինն էր: Այսպիսի դիցարանական գույգերի անունները հաճախ ծագում են

<sup>48</sup> Տե՛ս Նիկողայոս Ադոնց, Երկեր, Հատոր Ա, Պատմագիտական ուսումնասիրություններ, Եր., 2006, էջ 41-44:

<sup>49</sup> Տե՛ս Եղիշե Դուրեան, նշվ. աշխ., էջ 69:

<sup>50</sup> Կ. Կոստանյանց, նշվ. աշխ., էջ 21:

միևնույն արմատից: Կարմիր մոլորակ Մարսը հաճախ էր համեմատվում կրակի հետ (Մարսի անվանումներից մեկը «կրակ» է, հուն.՝ «Pyroeis»): Հայկը կարող էր համապատասխանել \*Ha(s) - «վառվել, այրվել»՝ Աստղիկի \*Haster<sup>51</sup> համանման արմատին:

Աստղիկի մասին Արամ Ղանալանյանը բերում է հետևյալ առասպելը:

Քաջքերն ու հավերժահարսերը մարդկային ծագում ունեն: Այդ մասին պատմում է Առաքել Եպիսկոպոսը. «Ունանք ասեն՝ թէ (հավերժահարսները) Քաջք են և այսպես ասեն, թէ յետ ջրիեղեղին՝ Նոյի որդի Եղեւ Մանիստոն, և այսպէս դրսար Աստղիկ անուն. Եւ յորժամ Աստված Եհարց զլոյ՝ թէ այլ որդի կամ դրսար ունի՞ս, և նա անաչեցավ, և ասաց՝ թէ ոչ. յայնժամ Երկու դուստրն և որդին Քաջք դարձան և աներեւույթը Եղեն. և վասն այն մահկանացու ասեն զնոսա՝ որ ծնանին և մեռանին. և ով որ կուտեսնէ զնոսա հանապազ հարսանիք և դափ և գուսան տեսանեն»<sup>52</sup>:

«Ուրիշ յիշատակ չկայ Մանիստոնի և Աստղկան վրայ առ մերայինս, բայց ի մերոյ աստուածոյ թէ այդ Եղբայրն և քոյր կուսակօնք մնացին և թմրկօք և պարուք յօդս ժուռ գային, գեղեցիկ վարձ իրենց անարատ կենցաղավարութեանն....»<sup>53</sup>:

Հավերժահարսերի և քաջքերի ծագման մասին նույն պատմությունը ծևափոխված տարբերակներով մինչ այսօր էլ պահպանվել է որպես փերիների և քաջքերի նախապատմություն: Ահա դրանցից հետևյալը. «Աստված հրամայել էր, որ Նոյն ու իր որդիները տապանում սուրբ մնան: Բայց Քանը չկատարեց հրամանը և տապանում ունեցավ մի որդի ու մի աղջիկ: Երբ ջուրը քաշվել էր, Աստված բաց արեց տապանի դուռը, և նրանք բոլորը մեկ-մեկ դուրս եկան, բայց այն Երկու երեխաներին ամոթից ներսը թողին: Դուան մոտ կանգնած Աստված հարցրեց. «Ոչ ոք չի՞ մնացել ներսուն»: «Ոչ ոք», - պատասխանեցին նրանք, Աստված պատասխանեց. «Թէ կան՝ չքանան»: Եղբայրն ու քույրը խսկույն աներևսութացան: Փերի աղջիկներն ու նրանց ամուսինները դրանց հետնորդներն են: Նրանք իսկը մարդկանց նման են, միայն թե ուզենան՝ կերևան, ուզենան՝ կաներևսութացան: Թեպետ սրանք այսպես մարդկային ծագում ունեն և անգամ աստվածային անեծքի տակ են գտնվում, այդուհանդերձ նրանք վեր են կանգնած մարդկանցից, և եթե նրանց չարքերին հավասար դասեն և չարքեր կոչեն, ապա նրանք կզայրանան ու վրեժինդիր կլինեն:

Քաջքերն ու փերիները սովորաբար միասին են երևում, բայց տարբեր տեղեր են բնակվում: Բնության, անտառների, սարերի, գետերի պահպան ոգիներ են, հայտնվում են հարսանիքի երթերում երգելով, խաղալով և պարելով»:

Այսպիսով, Աստղիկի՝ որպես աստվածուհու պաշտամունքը քրիստոնեության շրջանում սկսեց բացատրվել նրա՝ մարդկային ծնունդ լինելու հանգամանքով: Այդ պատճառով Դ. Ալիշանը գտնում է, որ Աստղիկն առավել ուշ ծագում ունի մյուս աստվածությունների համեմատությանք և բուն հայկական աստվածություն է համարում, որը հելլենիզմի շրջանում նույնացվում է հարևան Երկրների համանման աստվածություններին, և նրանց

<sup>51</sup> Արմեն Պետրօսյան, նշվ. աշխ., էջ 66:

<sup>52</sup> Արամ Գանալանյան. Արմանական պատմություններ. Երևան, 1979, էջ 248.

<sup>53</sup> Ղևոնդ Ալիշան, Հայաստան առաջ քան զլինելն Հայաստան, էջ 64:

նմանությամբ արձաններ են կանգնեցվել վերջինիս պատվիմ<sup>54</sup>: Ղևոնդ Ալիշանը ենթադրում է, որ Մովսես Խորենացին շփոթել է Աստղիկի հոր՝ Նոյի անունը: Նրա կարծիքով, Աստղիկը իրական անձ է եղել, այլ ոչ մտացածին, և նրա հայրը հին նահապետ է եղել: Սակայն մի բան անտարակույս է համարում, որ եթե նույնիսկ Նոյի դուստրն էլ չէր, սակայն Յայաստանում հնագույն ժամանակներում եղել է ոմն Աստղիկ, որը հոչակ է վայելել իր զարմանահրաշ գեղեցկությամբ կամ էլ հմտություններով (հավանաբար բուսական և բժշկական գիտելիքներով), որի համար էլ հետագայում աստվածների շարքն է դասվել:

Ըստ Մովսես Խորենացու, որը հենվում է Բերոսոսյան Սիրիլայի տվյալների վրա, Աստղիկը Քսիսոթրիոսի (Նոյի) ժառանգներից է, Զրվանի (Քրոնոս), Տիտանի և Յարեթի քույրը: Խորենացին այս երեք եղբայրներին նույնացնում է Նոյի երեք օավակների՝ Սեմի, Թամի, Յարեթի հետ:

Ուշ շրջանի մեկ այլ առասպելով՝ Աստղիկը Նոյի՝ Քսիսոթրիոսի դուստրն է: Զրիեղեղից և Նոյի Յայաստան նավարկելուց հետո աշխարհի տիրակալներ են դառնում Նոյի երեք օավակները՝ Զրվանը, Տիտանը և Յարեթոսթեն: Երբ նրանք ամբողջ աշխարհը բաժանում են իրար միջև, Զրվանը բռնանում է մյուս եղբայրների վրա և կամնենում է նրանց երկրներում իր որդիներին թագավորեցնել: Տիտանն ու Յարեթոսթեն ըմբռատանում են ավագ եղբոր՝ Զրվանի դեմ և պատերազմի մեջ մտնում նրա հետ: Տիտանը հափշտակում է Զրվանի երկրների մի մասը: Այս խռովություններին միջամտում է նրանց քույրը՝ Աստղիկը՝ խնդրելով եղբայրներին դադարեցնել կրիվները: Տիտանն ու Յարեթոսթեն համաձայնում են, որ առայժմ իրենց վրա թագավորի ավագ եղբայր Զրվանը, միայն մեկ պայմանով, որ նրանից ծնվելիք բոլոր արու օավակներին սպանեն, որպեսզի հետագայում Զրվանի թագավորությունն իրենց վրա սերնդից սերունդ հավերժական չլինի: Յամաձայնում են, դաշինք կնքում: Տիտանն ու Յարեթոսթեն իրենց հզոր մարդկանցից վերահսկիչներ են նշանակում Զրվանի բոլոր կանանց ծննդաբերության վրա: Եվ երբ Զրվանի նորածին արու օավակներից երկուսին սպանում են, Աստղիկը խողահարվում է և Զրվանի կանանց հետ միասին համոզում նի քանի տիտանների Զրվանի մյուս տղաներին կենդանի թողնել և ուղարկել արևմուտք, դեպի այն լեռ, որ կոչվում է Օլիմպոս, կամ հայերեն՝ Դյուցընկեց (այսինքն՝ աստվածների ընկնելու տեղ): Ղևոնդ Ալիշանը նշում է, որ այս առասպելը անհիմն է և իրականությունից հեռու<sup>55</sup>:

Աստղիկը Տարոնի կողմերում կառուցել է տալիս Աստղաբերդ (համառոտ՝ Ասղներդ) ամրոցը իր Զրվան եղբոր ապահովության համար: Այն հետագայում կոչվում է նաև Մոկաց բերդ: Աստղիկի անունով է կոչվել նաև «Մշո Սուրբ Յովհաննու մոտ Տորոսի գոտվույն մեկ կտորը» (Գ. Սրվանձտյանց, I, 47-48): Յայոց վերոհիշյալ մյուս ավանդության համաձայն՝ Աստղիկի լոգարանը նույնական գտնվում էր Տարոնում (Սրվանձտյանց, I, 71): «Աստղիկի բերդի» մասին հետաքրքիր տեղեկություններ է տալիս Յայկ Աճեմյանը.

«Աստղիկը Յայաստանի ամենագեղեցիկ ու սիրուն աղջիկն էր, որ միայն գիշերներ կ'երևէր իսկ ցերեկները կը պահուտէր, որ զինք վնտառող տաքարին երիտասարդներու ձեռքը չ'իյնար, չը նայած որ ինքը դիւթելու,

<sup>54</sup> Տես Ղևոնդ Ալիշան, Յին հավատք կամ հեթանոսական կրօնք հայոց, էջ 279-280:

<sup>55</sup> Տես նույն տեղը, 279-280:

հնայելու շնորհը ալ ունէր»<sup>56</sup>: Ապա անդրադառնում է Աստղիկի բերդի մասին ավանդությանը:

Վարագա լեռան վրա էր գտնվում Աստղիկի մեհենատեղին՝ Աստղիկի բերդ անվանմամբ, որի շուրջբոլորը զարդարված էր գույնզգույն ծաղիկներով և զուլալ աղբյուրներով: Դիցուհու մեհյանի շրջակայքում բնակավայրեր չկային, իսկ մեհյանի պահապանները տաճարը խմկարկող քրմերն էին: Գեղեցկության դիցուհու մեհյանը բնակչությունից հեռու էր կառուցված, որպեսզի նրա արձանի գեղեցկությունը չխարարվեր սրբապիղծների կողմից: Ամեն արշալույսին քրմերը սրբազան ծիսակարգով կատարում էին դիցուհու պաշտամունքի արարողությունները. մեհյանի ներսը խմկարկում էին, արձանի վրա անուշահոտ յուղեր էին սրբկում, իսկ շուրջը գույնզգույն ծաղիկներով զարդարում: Քրմերը գլխներին դնում էին սաղավարտներ, հագնում սպիտակ երկար շապիկներ, հավաքվում աստվածուհու մեհյանում արձանի դիմաց՝ սպասելով արևագալին, իսկ ժողովուրդը իրենց տներում էր սպասում արևի գալուստին, որն իր գեղեցկությանը և շնորհներով էր օժտել Աստղիկին: Արևի ծագելուն պես քրմերը խրոխտածայն երգում էին.

«Մյօ բարև, ա՞յօ բարև,  
Այգն արևուն տանք բարև,  
Մեր Աստղկան տանք բարև,  
Որ մեզի տայ շա՛տ արև...»<sup>57</sup>

Արևի ծագելուն պէս այս միևնույն մաղթանք-փառաբանութիւնը կօրիներգէին նաև բոլոր հեթանոս հայերը:

Այսպէս անցան երկա՞ր դարեր մինչև որ քրիստոնեութիւնը մուտ գտաւ Հայաստանի մէջ: Ս. Գրիգոր Լուսավորիչը շոշեցաւ Հայ աշխարհի ամէն կողմերը, կործանեց ու քանից հեթանոսական կամ կոռապաշտական բոլոր նուիրական վայրերը և անոնց մոխիրներուն ու ավերակներուն վրայ հիմք դրաւ քրիստոնէական տաճարներու և մենաստաններու: Լուսաւորիչը նոր կրօնի իւր առաքելութիւններով ու քարոզութիւններով հասաւ Մշոյ աշխարհը, յԱշտիշատ, ուր կար Աստղիկի անուան մեհեան նը, որ քանդուեցաւ ու կործանուեցաւ...

Վարագայ լեռնահովտի Աստղիկի կործանուած մեհեանի տեղ վանք կամ տաճար չը շինուեցաւ, զի անմատչելի էր հաւատացիալներու հոժ բազմութեան համար այդպիսի բարձունքներու վրայ աղօթատեղի ունենալը»<sup>58</sup>:

<sup>56</sup> Հայկ Ածեմյան, Ծաղկաքաղ Կասպուրականի հայ ժողովրդական բանահիւսութեան, էջ 97-102, նաև՝ Ա. Ղանալանին, նշվ. աշխ., էջ 147:

<sup>57</sup> Քրիստոնեությունից առաջ այս քայլակը ծոնվում էր Աստղիկին, սակայն քրիստոնեության ընդունումից հետո այս օրիներգը ծոնվեց Լուսավորչին, ապա ընդհանրացավ և նույնիսկ դարձավ վանեցիների հարսանեկան երկտող՝ ուղղված փեսային: Այս օրիներգի մէջ զգացվում է նաև մեր կրակապաշտ նախնիների ավանդությունների արտահայտումը. «Ողջո՞յն արշալոյսին, ողջո՞յն առաւօտին, ողջո՞յն տանք մեր Աստղիկին (կամ Լուսավորչին, քագաւորին), որ մեզի տայ շա՛տ արև- երկար ու երջանիկ կեանք» (նույն տեղում, էջ 100-102):

<sup>58</sup> «Վանի արևեակողմը, Վարագայ լեռնահովտին մէջ, Գալիլեա լեռնագագաթին մօտիկ կը գտնուի Աստղկան բերդ կոչված բարձունքը, որ շրջապատված է բնական հրաշագետ տեսարաններով: Բերդի կամ աւերակներու հետքեր չը կան այդ քարաբարձունքին վրայ, իսկ ժողովուրդը կ'ավանդէ, որ շա՛տ հին ժամանակներ առաջ հայոց Աստղիկ դիցուհու մեհեաններէն մէկն ալ կառուցված էր այդ բարձունքի վրայ, ուր տեղի կունենային հայկական գեղեցկութեան աստվածուհու ամէնօրյա պաշտամունքները, ամեն առաւօտ՝ արևածագին» (Հայկ Ածեմյան, նշվ. աշխ., էջ 100-103):

Այսպիսով մենք տեսնում ենք, թե ինչպիսի մեծ պաշտամունք ուներ Հայաստանում Աստղիկ դիցուիին, որը բուն հայկական աստվածություն էր՝ հիմնված մայր աստվածուիու հնագույն՝ պտղաբերության և արգասաբերության հատկանիշների վրա: Որպես հղիների և կույսների հովանավոր աստվածություն և սրբազն ջրերի ոգի՝ նա քրիստոնեության շրջանում ստանում է բժշկելու հատկանիշներ, իսկ պատմիչների կողմից դիտվում է որպես իրական անձ՝ իբրև Նոյ նահապետի դուստր, որպեսզի սեփականացվեր հեթանոս աստվածուիու պաշտամունքը: Դրա վկայությունն են քրիստոնեական շրջանի առասպելները:

Երուսաղեմում նույնպես քրիստոնեության ընդունման ժամանակ Գողգոթա (Վերջինս կոչվում էր նաև Ուկեբլուր) լեռան տարածքում՝ Աֆրոդիտե աստվածուիու սրբատեղի վրա, հիմնեցին քրիստոնեական Եկեղեցի, իսկ նրա արձանի փոխարեն խաչ կանգնեցրին, որպեսզի նրան հավատացողները այժմ էլ խաչը պաշտեին<sup>59</sup>:

Ղևոնդ Ալիշանը<sup>60</sup>, հիմնվելով Միսիթար Գոշի «Դատաստանագրքի» վրա, Աստղիկին համարում է Արաբիա ուղևորված Նոյի դուստր, որը Սողոմոնի մոտ Եկած Սարա թագուիու նախնին էր: Ինչպես Ալիշանն է նշում, մինչ հունական «Խայտառակ» արձանների բերվելը Հայաստան, Աստղիկի գաղափարը առավել պարկեշտ է եղել՝ հենց ըստ իր անվան՝ լուսավոր և պայծառ էակ՝ կամ համանման Արուսյակին և հռոմեացիների **Venus-Urania**-ին՝ օջախի պահապան և երկնային աստվածուիի<sup>61</sup>: Նրան կոչում էին «Ուկեծողի», «Ուկեծին» և «Վարդամատն»: Յետագայում նա դառնում է ուրախության, փափկակյացության, ցանկասիրության<sup>62</sup> հորդորիչ, որոնց ապացույցն են նրան նվիրաբերվող վարդերը, աղավնիները, նրան նվիրված «Վարդամատն» տիտղոսը և Վարդավառի տոնախմբությունները: Այս տոնը քրիստոնեության մեջ փոխարինվեց Տիրոջ Այլակերպության տոնվ Թաքոր<sup>63</sup> լեռան վրա: Քրիստոնյաները այս տոնը դրեցին Այլակերպության տոնից քառասուն օր հետո՝ խափանելով Աստղիկի և Յեփեստոսի<sup>64</sup> կամ Սիհրի տոնները և դրանց հետ մեկտեղ՝ արեգակի և լուսնի կրոնական հիշատակները:

Այսպիսով, մենք տեսնում ենք, որ Աստղիկը կապված էր լուսնի պաշտամունքի հետ, ինչի մասին էր վկայում նաև Արածանիկ ափին գիշերները լուսնի լույսի տակ լոգանք ընդունելու հանգամանքը: Յետագայում նույնացվեց իր աքքաղական Արուսյակ-հշտար և Վեճերա-Գիշերավար մոլորակի՝ Լուսնի կրտսեր ուղեկցի հետ: Յեթանոսական վերոհիշյալ «չաստվածները» հանդես էին գալիս բնության տարերքների, երևույթների ամձ-

<sup>59</sup> Տե՛ս **Ամերոդյո Դոնինի.** Լիուդի, արքաներ և աստղեր. Մ., 1966, էջ 103-104:

<sup>60</sup> Տե՛ս **Ղևոնդ Ալիշան,** Հայաստան առաջ քան զինելն Հայաստան, էջ 265:

<sup>61</sup> Տե՛ս **Արմեն Պետրօսյան,** նշվ. աշխ., էջ 67:

<sup>62</sup> Տե՛ս **Ե. Դուրեան,** նշվ. աշխ., էջ 47, «Աստղիկ (և Ավրորիտէ)՝ զոր մայր ցանկութեանց կոչեն անենայն հեթանոսք. և բազում են արբեցութիւնք նորա և անառակութիւնք» (հեղինակը մեջբերել է Կիրանես Թերթողի «Յաղագս պատկերաց» աշխատությունից):

<sup>63</sup> Վարդավառը քրիստոնեության մեջ փոխարինվեց Փրկչի երևալով, այսինքն Քրիստոսի Պայծառակերպությամբ Թաքոր լեռան վրա (տե՛ս **Վիկտորյա Վասիլյան,** նշվ. աշխ., էջ 277-284):

<sup>64</sup> Աստղիկի սիրեցյալը կամ ամուսինը համարվում է Վահագնը, որին զուգահեռ հելլենիզմի դարաշրջանում Վուկանոսին կամ Յեփեստոսին են հիշատակում հայ պատմիչները՝ հունական ազդեցությամբ հռոմեականից փոխառված: Բայց այս երկուսի քույր և եղբայր լինելու մասին հայ պատմիչների մոտ ոչ մի վկայության չենք հանդիպում:

նավորման փոխարեն, աստվածային ոգիներ էին, որոնք հովանավոր էին մարդկանց և Աստծո ստեղծած ամեն ինչի:

Յայ պատմիչները Աստղիկին հաճախ ներկայացնում են Աֆրոդիտե անունով, սակայն կցանկանայինք նորից նշել, որ նրանց պաշտամունքն ու կերպարները շատ տարբեր էին, որ հելլենիզմում միայն նույնացվեցին: Այդ մասին Ղևոնդ Ալիշանը ծշմարիտ նկատում է. «Մէր հեթանոս նախնեաց կրօնից մէջ յետ Անահիտայ առաջին դիցուիի ճանաչի Աստղիկ, և թարգմանի փոխանակ Յունաց Ավրորդիտէ և Լատինաց Վենուս կամ Վեներէ հեշտաբեր չաստվածուինյան. սակայն երեւի թէ գէթ առ հնագոյն նախահարս մեր Աստղայ համբաւն մաքուր էր և իբրեւ խնամակալ և կուսաշնորհ՝ որով և սրբազն օրիորդ նը պատուեր»<sup>65</sup>:

**ВИКТОРИЯ ВАСИЛЯН – Место и роль богини Астхик в армянской мифологии.** – В статье рассматриваются древнейшие корни образа богини Астхик и сохранившиеся мифы о ней.

Астхик почиталась армянами как хранительница очага и богиня любви, красоты, плодородия, воды. В эллинистический период её кульп вобрал в себя черты греческой богини Афродиты. Именно в эпоху эллинизма их образы и иконографические типы, прежде совершенно различные, слились в Армении воедино. В христианскую эпоху в Астхик усматривали реальный персонаж, наделённый сверхъестественными свойствами целительницы и врачевательницы, о чём нам поведали мифы и христианские легенды.

**VIKTORYA VASILYAN – Mythological Image and Preserved Myths about Goddess Astghik.** – The article considers questions about origins of Armenian goddess Astghik, her ancient and pagan roots, saved mythological legends about her image. For Armenian people Astghik was the goddess of love and beauty, fertility and water etc. In the Period of Hellenism the worship of Astghik was united with the worship of Greek goddess Aphrodite. Astghik was considered as the goddess of home guard and of the heaven.

But the characters and iconographic types of those two goddesses were quite different. In Armenia they were merged only by the Period of Hellenism. At the Time of Christianity the goddess Astghik was being deified as a real person with medical and supernatural properties, which have been told in myths and legends since Christian Times.

---

<sup>65</sup> Դ. Ալիշան, Յին հավատք կամ հեթանոսական կրօնք հայոց, էջ 279-281: